ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

26 օգոստոսի 2014 թվականի N 113-Ա

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 167-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2013 թվականի նոյեմբերի 29-ի N 125-Ա կարգադրությունը, ինչպես նաև *Գ. Մարտիրոսյանի* անձնական դիմումը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ՝ ***Գայանե Մարտիրոսյանին*** տրամադրել 2013 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործած մասը և լրացուցիչ արձակուրդը՝ 14 աշխատանքային օր՝ 2014 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 19-ը ներառյալ:

2. ***Գայանե Մարտիրոսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ՝ ***Եվենա Լյուինայի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի օգոստոսի 26
ք. Հրազդան